ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԻՆՉՈՒ-ՈՐ ՀԱՐՑՄԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԸ

Ս. Վ. ԴՈՒԿԱՍՅԱՆ

Մարդկային հարաբերությունների բարդությունը հատկապես երևում է լեզվական հաղորդակցման ժամանակ: Հայտնի է, որ լեզվի նշանային հորինվածքը ունի գործառական երեք կողմ՝ հայտանշանային (սիմպտոմ), ազդանշանային (սիգնալ) և խորհրդանշանային (սիմվոլ)[1]: Առաջինը խոսողի արտահայտությունն է, երկրորդն ուղղված է դեպի լսողը, երրորդը՝ դեպի օբյեկտը: Հայտանշանը իր ցայտուն դրսևորումն է գտնում բացականչական նախադասությունների մեջ, ազդանշանը՝ հրամայական, խորհրդանշանը՝ պատմողական, իսկ հարցական նախադասությունների մեջ այդ կողմերը հանդես են գալիս չտարբերոշված ձևով:

Խորհրդանշանը ճանաչողական, մտքի ձևավորման գործառություն է: Այն նաև վերաբերական գործառություն է, այսինքն՝ արտահայտում է այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք՝ անվանումը և ստորոգումը: Անվանումը լեզվական գործառություն է, ստորոգումը՝ խոսքային: Իրականում անվանումն ունի է ունենում նախադասության, ստորոգման մեջ: Մյուս կողմից էլ ստորոգումը անվանում է պարունակում:

Ստորոգումը իրականության որևէ հատված վերածում է մտքի կամ դատողության: Ստորոգումը իրական տեսք է ստանում ներկայացման և ապրման մեջ: Ներկայացումը մտքի հնչյունական մարմնավորումն է, որը ասույթի մակարդակում դրսևորվում է որպես հնչերանգ, իսկ հաղորդակցական գործընթացում հնչերանգային դրսևորում ստացած ասույթը անցնում է հաղորդողից ընդունողին: Ստորոգումը արտալեզվական օբյեկտը վերածում է լեզվական սուբյեկտիվ ձևի, իսկ հնչերանգը՝ լեզվական սուբյեկտը ուղղակի լեզվական օբյեկտի:

Յուրաքանչյուր խոսք ունի իր անմիջական դրդապատճառը և նպատակը: Խոսքի վերջնական նպատակը իրականությունը այս կամ այն կերպ փոխելն է, որ սովորաբար կատարվում է մեկ ուրիշի (հաղորդակցի) միջոցով, ուստի և առաջացնում է ազդանշանի անհրաժեշտություն: Այս դեպքում նախ պետք է լսել, հետո հասկանալ, ապա կատարել, այսինքն՝ հաղորդակցումը կատարվում է որոշակի փուլերով:

Հայտանշանը որպես մյուս երկուսի (ազդանշան և խորհրդանշան) միջնորդավորում է: Այստեղ ամենակարևոր նախապայմանը մտքին արտահայտություն տալն է:

Փաստորեն եթե մենք լսում ենք, նախ ընկալում ենք հնչերանգը, և դուրս է գալիս, որ խոսողն արդեն ավարտում է հաղորդման գործողությունը:

Լեզվի գործառություն հաղորդակցական գործընթացի վերաբերյալ է. Աթայանի տեսությունը շարադրելուց հետո՝ պարզ է դառնում, թե որքան կարևոր է յուրաքանչյուր հաղորդակցական տիպի բազմակողմանի ուսումնասիրությունը[2]:

---

[1] К. Бюлер, Теория языка (В. А. Звегинцев, История языкознания XIX—XX веков в очерках и извлечениях, ч. II. сост. В. А. Звегинцев, М., 1965, с. 26—27).

[2] Է. Աթայան, Գործառական հատկանիշների բաշխումը մարդու լեզվական գործունեության մեջ (Հոբելյանական գիտական նստաշրջանների նյութերի ժողովածու, Ե., 1981, էջ 345—360), նաև նույնի՝ Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981, էջ 107, 113—129:

Ինչու-որ հարցումը հարցական նախադասությունների համակարգում գրավում է ուրույն տեղ և մի շարք հարցատեսակների հետ մեկտեղ հարցմանը բաժին ընկնող հաղորդակցական հիմնական ծանրությունը վերցնում է իր վրա։ Ժամանակակից հայերենի հիմնական հարցատեսակները հետևյալներն են.

1) Ո՞ւր ես գնում։
2) Տո՞ւն ես գնում, թե թատրոն։
3) Տո՞ւն ես գնում։
4) Տուն գնո՞ւմ ես։

Բերված հարցատեսակներից մեկի ընտրությունը կախված է նրանից, թե խոսողը հարցման հայտնի և անհայտ անդամների նկատմամբ ինչ սուբյեկտիվ վերաբերմունք ունի։ Այս տեսակետից մեր առանձնացրած առաջին երեք հարցատեսակների միջև տեղի է ունենում ներքին աստիճանական անցում՝ պատասխանի որոշակիության (նրա մեջ պարունակած սեղեկության) նվազագույն աստիճանից մինչև առավելագույնը։ Խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը դրսևորվում է այն բանում, թե նա ինչ չափով է ենթադրում իր հարցման պատասխանը. Առաջին դեպքում խոսողը ենթադրում է, որ կստանա մեկը հնարավոր պատասխանների անսահմանափակ քանակությունից, երկրորդ դեպքում՝ երկու պատասխաններից մեկը, իսկ երրորդ դեպքում՝ մեկ պատասխան։

Հետաքրքիր է, որ ընտրանքային հարցման եզրերի ծավալումից հասնում ենք մի սահմանի, որն իր ընդգրկումով հավասարվում է ինչու-որ հարցմանը և արտահայտվում է հետևյալ բանաձևով (L-ով նշանակված են տեղ ցույց տվող բոլոր բառերը)[3].

$$\boxed{\text{Գնում ես } L_1^? + L_2^? + L_3^? + \cdots + L_{n-1}^?, \text{ թե } L_n} = \boxed{\text{Ո՞ւր ես գնում}}$$

Այժմ անցնենք ինչու-որ հարցման հնչերանգի նկարագրությանը։ Ուսումնասիրությունը կատարել ենք փորձառական եղանակով, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության փորձասրահում։ Գրանցել ենք 18 հնչագրություն՝ երեք հաղորդավարների ընթերցմամբ, որոնք ծնվել և կրթություն են ստացել Բեյրութում։ Գրանցել ենք հետևյալ հնչագրությունները՝ Ո՞վ տարավ, Ո՞ւր գնաց, Քանի՞ տարեկան ես, Ի՞նչ գիրք կարդաց, Ինչպե՞ս անցար գետը, Ինչո՞ւ կրխնդաս, Ո՞րն է այն տագնապը, Ի՞նչ է ծրագիրդ, Ո՞վ է սա մարդը, Ինչպե՞ս պատահեցավ, Ի՞նչ պատահեցավ ինձի, Ինչո՞ւ մաղերդ թաց են, Ո՞ւր տեսար Սերորը, Ինչպիսի՞ տղա կրփնտրես, Որքա՞ն դրամ եկավ ձեռքդ, Ե՞րբ կրնամ նրկարս առնել, Ո՞վ քանդած է, Ո՞վ մումեր է։ Այնուհետև կատարել ենք ձայնագրված հնչագրությունների լսողական վերլուծություն։ Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձրել հիմնական տոնի հաճախականության, միջուկի, եռամիջուկի, նախամիջուկի տոնային կառուցվածքի վրա (միջուկը հնչագրության գլխավոր շեշտ կրող վանկն է, նախամիջուկը՝ միջուկին նախորդող վանկը, եռամիջուկը՝ միջուկին հաջորդող վանկը)։ Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր մարդ ունի իր անհատական ձայնային յուրահատկությունները, մենք հնչերանգը ուսումնասիրել ենք հատկապես ըստ հարաբերական ձայնաբանական հատկությունների, որոնք ստացվում են ձայնի հաճախականության, ուժգնության և տևողության բացարձակ արժեքներից (հնչագրության հաճախականության

---

3 Այս մասին մանրամասն տե՛ս Ս. Ղուկասյան, ժամանակակից հայերենի հարցատեսակները (Լեզվի և ոճի հարցեր, Ե., 1968, էջ 134—160)։

ձայնածավալ, հնչադասության ուժգնության ձայնածավալ, հնչադասության վանկի միջին տևողություն և այլն[4]։

Երբ միջուկի հաճախականության ձայնածավալի թվային արժեքի առջև դրվում է — նշանը, ապա նշանակում է, որ տոնը միջուկում նվազում է, երբ + նշանը՝ աճում է։

Հարցական հնչադասությունների արտասանության դեպքում առաջին հաղորդավարի ձայնասահմանը փոփոխվում է 100—200 հց սահմաններում, որը կազմում է 12 կիսատոն, երկրորդինը՝ 120—350 հց, որը կազմում է 19 կիսատոն, երրորդինը՝ 110—340 հց, որը կազմում է 19 կիսատոն։

Այժմ գործառական ողջ նյութից նկարագրենք չորս հնչադասության հնչերանգը, ապա կրնդհանրացնենք և ի մի կբերենք ուսումնասիրված բոլոր հնչադասությունների տվյալները միասին վերցրած։

1. Ա՞վ տարավ։ Այս հնչադասության հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը երեք հաղորդավարների դեպքում էլ բարձրացող-իջնող-բարձրացող է։

«Ա՞վ տարավ» հարցումը նախամիջուկ չունի։ Միջուկում տոնի շարժումը միայն բարձրացող է, համիջուկում՝ իջնող-բարձրացող։

Առաջին և երրորդ հաղորդավարների հաճախականության մակարդակը հարցման սկզբում 120 հց է, երկրորդինը՝ 150 հց։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 7 կիսատոն է, երկրորդինը՝ 10, երրորդինը՝ 11։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության անման ձայնածավալը 4 կիսատոն է, երկրորդինը՝ 6, երրորդինը՝ 11։ Առաջին հաղորդավարի համիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 7 կիսատոն է, երկրորդինը՝ 10, երրորդինը՝ 11։ Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը +7 կիսատոն է, երկրորդինը՝ +5, երրորդինը՝ +11։ Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ առավելագույն հաճախականությունը սեղմյանանում է առաջին վանկում, իսկ նվազագույնը՝ երկրորդ։ Նշենք, որ առաջին հաղորդավարի վերջին վանկի (բավ) առավելագույն հաճախականությունը նույնպես 150 հց է և իր մեծությամբ հավասարվում է ողջ հնչադասության առավելագույն հաճախականությանը։ Ընդհանրապես արևմտահայերենում ինչու-որ հարցման վերջին վանկի առավելագույն հաճախականությունը շատ քիչ է տարբերվում ողջ հնչադասության առավելագույն հաճախականությունից, որը մեծ մասամբ համընկնում է միջուկային վանկի առավելագույն հաճախականության հետ։

Առաջին և երկրորդ հաղորդավարների առավելագույն ուժգնությունը 35 դբ է։ Երրորդինը՝ 34։ Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ հնչադասության ուժգնության ձայնածավալը կազմում է 1 դբ։ Երեք հաղորդավարների առավելագույն ուժգնությունը տեղայնանում է առաջին վանկում։

Առաջին և երրորդ հաղորդավարների ողջ հնչադասության տևողությունը 580 մվրկ է, երկրորդինը՝ 540։ Առաջին և երրորդ հաղորդավարների հնչադասության վանկի միջին տևողությունը 193 մվրկ է, երկրորդինը՝ 180։ Առաջին և երրորդ հաղորդավարների միջուկային վանկի տևողությունը 170 մվրկ է, երկրորդինը՝ 160։ Առաջին և երրորդ հաղորդավարների ՄՎՏ (միջուկային վանկի տևողություն) հարաբերությունը ՎՄՏ 0,88 է, երկրորդինը՝ 0,89։

2. Ի՞նչ գիրք կարդաց։ Այս հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին և երրորդ հաղորդավարների դեպքում բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող է, երկրորդի դեպքում՝

---

4 Դեռ ինչպես են որոշվում համապատասխան ձայնաբանական հատկությունները, տե՛ս Ս. Ղուկասյան, Հարցական նախադասությունների հնչերանգը (Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Ե., 1968, էջ 82)։

բարձրացող-իջնող։ Ինչպես տեսնում ենք, երկրորդ հաղորդավարի տոնի շարժումը մյուսներից տարբեր է և բնորոշ՝ արևելահայերենին։ Լսողական վերլուծության ժամանակ ունկնդիրները ոչ մի արտասովոր բան չտեսան դրանում և գտան, որ այն նորմայից շեղում չէ և ընդունելի է։

Այս հարցումը նախամիջուկ չունի։ Միջուկում տոնի շարժումը միայն բարձրացող է, եամիջուկում երկրորդ հաղորդավարի դեպքում իջնող է, մյուս երկուսի դեպքում՝ իջնող-բարձրացող։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 120 հց է, երկրորդինը՝ 200, երրորդինը՝ 140։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը՝ 18, երրորդինը՝ 11։ Երկրորդ հաղորդավարի հաճախականության ձայնածավալը այսքան բարձր է, որովհետև հիմնական տոնի շարժման ուղղությունը նման է արևելահայերենին, և տոնը ստորին եզրում համարյա մոտենում է ձայնի նվազման սահմանային արժեքին։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը 6 կիսատոն է, երկրորդինը՝ 10, երրորդինը՝ 4։ Առաջին հաղորդավարի եամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 10 կիսատոն է, երկրորդինը՝ 13, երրորդինը՝ 3։ Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը +8 կիսատոն է, երկրորդինը՝ —1, երրորդինը՝ +9։ Առաջին և երկրորդ հաղորդավարների առավելագույն հաճախականությունը տեղայնանում է առաջին (ինչ) վանկում, իսկ երրորդինը՝ վերջին (դաց). ընդ որում վերջին վանկի առավելագույն հաճախականությունը 100 հց-ով մեծ է միջուկինից։ Չմոռանանք ասել, որ միջուկի հաճախականության աճը շարունակվում է եամիջուկային վանկում, ապա նոր նվազում։ Առաջին հաղորդավարի նվազագույն հաճախականությունը տեղայնանում է երկրորդ (գիրք) վանկում, երկրորդինը՝ վերջին, երրորդինը՝ երկրորդ (գիրք) վանկում։

Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը 34 դբ է, երկրորդինը՝ 32, երրորդինը՝ 35։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 2 դբ է, երկրորդինը՝ 6, երրորդինը՝ 7։ Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը տեղայնանում է երրորդ (կար) վանկում, երկրորդինը՝ առաջին (ինչ) և երրորդ (կար) վանկերում, երրորդինը՝ վերջին (կաց)։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 980 մվրկ է, երկրորդինը՝ 920, երրորդինը՝ 870։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 245 մվրկ է, երկրորդինը՝ 230, երրորդինը՝ 218։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 180 մվրկ է, երկրորդինը՝ 200, երրորդինը՝ 170։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՍՏ 0,73 է, երկրորդինը՝ 0,87, երրորդինը՝ 0,78։

3. Քանի՞ տարեկան ես։ Այս հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին հաղորդավարի դեպքում իջնող-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող է, երկրորդինը՝ բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող։

«Քանի՞ տարեկան ես» հարցման նախամիջուկում առաջին հաղորդավարի տոնի շարժումը իջնող է, երկրորդինը և երրորդինը՝ բարձրացող։ Միջուկում տոնի շարժումը բարձրացող է, եամիջուկում՝ իջնող-հավասար-բարձրացող։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 110 հց է, երկրորդինը՝ 150, երրորդինը՝ 120։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 8 կիսատոն է, երկրորդինը՝ 10, երրորդինը՝ 11։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը՝ 8 կիսատոն է, երկրորդինը՝ 4, երրորդինը՝ 7։ Առաջին հաղորդավարի եամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 4 կիսատոն է, երկրորդինը և երրորդինը՝ 5։ Առա-

ին և երկրորդ հաղորդավարների հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը –7 կիսատոն է, երրորդինը՝ –9։ Բոլոր հաղորդավարների առավելագույն հաճախականությունը տեղայնանում է միջուկային (նի) վանկում։ Առաջին և երրորդ հաղորդավարների նվազագույն հաճախականությունը տեղայնանում է շորրորդ (րե) վանկում, իսկ երկրորդինը՝ հինգերորդ (կա) վանկում։

Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը 38 դբ է, երկրորդինը՝ 35, երրորդինը՝ 31։ Առաջին և երրորդ հաղորդավարների հնչադասության ուժգնության ձայնածավալը 6 դբ է, երկրորդինը՝ 7։ Բոլոր հաղորդավարների դեպքում էլ հնչադասության առավելագույն ուժգնությունը տեղայնանում է երրորդ (սա) վանկում։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 1030 մվրկ է, երկրորդինը՝ 980, երրորդինը՝ 930։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 172 մվրկ է, երկրորդինը՝ 163, երրորդինը՝ 155։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 130 մվրկ է, երկրորդինը և երրորդինը՝ 100։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0,76 է, երկրորդինը՝ 0,61, երրորդինը՝ 0,65։

4. Ինչպե՞ս անգար գետը։ Այս հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին և երրորդ հաղորդավարների դեպքում հավասար-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող է, երկրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող-բարձրացող։

Նախամիջուկում առաջին և երրորդ հաղորդավարների տոնի շարժումը հավասար է, իսկ երկրորդինը՝ բարձրացող։ Միջուկում երեք դեպքում էլ բարձրացող է, իսկ ետմիջուկում՝ իջնող։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 100 Հց է, երկրորդինը՝ 170, երրորդինը՝ 150։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը՝ 12, երրորդինը՝ 14։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը՝ 5, երրորդինը՝ 10։ Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը և երրորդինը՝ 10։ Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը +7 կիսատոն է, երկրորդինը՝ +1, երրորդինը՝ +11։ Առավելագույն հաճախականությունը երեք հաղորդավարների դեպքում էլ տեղայնանում է երկրորդ (պե) վանկում, նվազագույնը՝ առաջինի դեպքում տեղայնանում է յոթը վանկերում էլ, երկրորդի դեպքում վերջին (սը), երրորդի դեպքում՝ վերջին երեք վանկերում։

Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը 35 դբ է, երկրորդինը և երրորդինը՝ 32։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 5 դբ է, իսկ մյուս երկուսինը՝ 4։ Առաջին և երկրորդ հաղորդավարների առավելագույն ուժգնությունը տեղայնանում է երրորդ (ան) վանկում, իսկ երրորդինը՝ չորրորդ (դար) վանկում։

Առաջին և երրորդ հաղորդավարների ողջ հնչադասության տևողությունը 1140 մվրկ է, երկրորդինը՝ 1130։ Առաջին և երրորդ հաղորդավարների հնչադասության վանկի միջին տևողությունը 190 մվրկ է, երկրորդինը՝ 188։ Առաջին և երկրորդ հաղորդավարների միջուկային վանկի տևողությունը 160 մվրկ է, իսկ երրորդինը՝ 140։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0,84 է, երկրորդինը՝ 0.85, երրորդինը՝ 0,71։

Հիմնական տոնի շարժման ուղղությունը։ Արևմտահայերենում հիմնական տոնի շարժման ուղղությունը ցուցաբերում է այսպիսի պատկեր.

1) բարձրացող-իջնող-բարձրացող (Ինչո՞ւ մտերիմ քայլ ֆն, 2-րդ հաղ.).
2) բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող (Ի՞նչ պատահեցավ ինձի, 1-ին հաղ.).

3) բարձրացող-իջնող (Ի՞նչ է ծրագիրդ, 3-րդ հաղ.),
4) իջնող-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող (Ե՞րբ կրընամ նկարս առնել, 1-ին հաղ.),
5) բարձրացող-իջնող-հավասար-իջնող-հավասար-բարձրացող (Ի՞նչ պատահեցավ ինձի, 2-րդ հաղ.),
6) հավասար-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող (Ինչպիսի՞ տղա կրփնտրես, 1-ին հաղ.),
7) բարձրացող-իջնող-հավասար-իջնող-բարձրացող (Որքա՞ն դրամ ելկավ ձեռքդ, 3-րդ հաղ.),
8) բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող-բարձրացող (Ո՞վ քանդած է, 2-րդ հաղ.),
9) իջնող-բարձրացող-իջնող-բարձրացող (Ինչո՞ւ կրխնդաս, 2-րդ հաղ.),
10) բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող (Ո՞ւր գնաց, 1-ին հաղ.),
11) բարձրացող-հավասար-բարձրացող (Ո՞վ մոմեր է, 3-րդ հաղ.),
12) բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող (Ինչպիսի՞ տղա կրփնտրես, 3-րդ հաղ.),
13) բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող-հավասար-իջնող-բարձրացող (Ինչպիսի՞ տղա կրփնտրես, 2-րդ հաղ.),
14) հավասար-բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող-իջնող (Ինչպե՞ս անցար դեռը, 3-րդ հաղ.)։

Նշված տարբերակներից բոլորից շատ հանդիպում է 1-ինը (18 անգամ), երբ տոնի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող-բարձրացող է, այնուհետև 2-րդը (8 անգամ), երբ տոնի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող է, հետո՝ 3-րդը (6 անգամ), հետո՝ 4-րդը (3 անգամ), իսկ մյուսները հանդիպում են 1—2 անգամ։ Ունենք չորս դեպք, երբ հնչաղասությունը սկսվում է իջնող տոնով։ Կա չորս դեպք էլ, երբ տոնը ունի արևելահայերենին բնորոշ շարժում, այսինքն՝ տոնի շարժումը բարձրացող-իջնող է, սակայն ունկնդիրները տոնի այսպիսի շարժումը սխալ չհամարեցին և ընդունեցին արևմտահայերենին բնորոշ։ Այսպիսով, բացի մասնավոր դեպքերից, տոնի շարժման ընդհանրացված ուղղությունը արևմտահայերենում բարձրացող-իջնող-բարձրացող է, որովհետև այս դեպքում միջուկից հետո կատարվող բարձրացումները շատ չնչին են։

Հնչաղասության հաճախականության ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի հնչաղասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 7—12 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 7 կիսատոն է (Ո՞վ տարավ), իսկ առավելագույնը՝ 12։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 9—10 կիսատոն սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչաղասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 10—13 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 10 կիսատոն է (Ո՞վ մոմեր է), իսկ առավելագույնը՝ 13 (Ո՞ւր տեսար Սերոբը)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 10—12 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչաղասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 11—16 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 11 կիսատոն է (Քանի՞ տարեկան ես), իսկ առավելագույնը՝ 16 (Ո՞վ մոմեր է)։ Այն հիմնականում փոփոխվում է 11—14 կիսատոն սահմաններում։

Հնչաղասության մակարդակը հնչաղասության սկզբում։ Առաջին հաղորդավարի հնչաղասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 100—150 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 100 հց է (Որքա՞ն դրամ ելկավ ձեռքդ), իսկ առավելագույնը՝ 150 (Ինչո՞ւ կրխնդաս)։ Այն հիմնականում փոփոխվում է 100—120 հց սահմաններում։

Երկրորդ հաղորդավարի հնչաղասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 130—210 հց սահմաններում—այսինքն՝ նվազագույն մեծությունը 130 հց է (Ի՞նչ է ծրագիրդ), իսկ առավելագույնը՝ 210 (Ո՞վ քանդած է)։ Այն հիմնականում փոփոխվում է 150—200 հց սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչաղասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 120—200 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 120 հց է (Քանի՞ տարեկան ես), իսկ առավելագույնը՝ 200 (Ի՞նչ է ծրագիրդ)։ Այն հիմնականում փոփոխվում է 140—160 հց սահմաններում։

Միջուկի հաճախականության աճման ձայնածավալը: *Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է 4—9 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 4 կիսատոն է (Ի՞նչ պատահեցավ ինձի), իսկ առավելագույնը՝ 9 (Ինչո՞ւ մաղերդ թաց են)։ Այն հիմնականում փոփոխվում է 5—8 կիսատոն սահմաններում։*

Երկրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է 5—10 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 կիսատոն է (Ո՞վ քանդած է), իսկ առավելագույնը՝ 10 (Ո՞վ է սա մարդը)։ Այն հիմնականում փոփոխվում է 5—8 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է 5—12 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 կիսատոն է (Ինչպիսի՞ տղա կրփնտրես), իսկ առավելագույնը 12 (Ե՞րբ կրնամ նկարս առնել)։ Այն հիմնականում փոփոխվում է 6—9 կիսատոն սահմաններում։

Նախամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը: *Առաջին հաղորդավարի նախամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 4—10 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 4 կիսատոն է (Քանի՞ տարեկան ես), իսկ առավելագույնը՝ 10 (Ի՞նչ գիրք կարդաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 7—9 կիսատոն սահմաններում։*

Երկրորդ հաղորդավարի նախամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 4—13 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 4 կիսատոն է (Ո՞ւր տեսար Մերոբը), իսկ առավելագույնը՝ 13 (Ի՞նչ գիրք կարդաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 7—10 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի նախամիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 2—13 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 կիսատոն է (Որքա՞ն դրամ եկավ ձեռքդ), իսկ առավելագույնը՝ 13 (Ի՞նչ է ծրագիրդ)։ Այն հիմնականում փոփոխվում է 7—10 կիսատոն սահմաններում։

Հնչաղասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը: *Առաջին հաղորդավարի հնչաղասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է +5 — +9 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը +5 կիսատոն է (Ի՞նչ է ծրագիրդ), իսկ առավելագույնը՝ +9 կիսատոն (Ո՞վ մոմեր է)։ Այն հիմնականում փոփոխվում է +7 — +8 կիսատոն սահմաններում։*

Երկրորդ հաղորդավարի հնչաղասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է +5 — +10 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը +5 կիսատոն է (Ո՞վ տարավ), իսկ առավելագույնը՝ +10 (Ինչո՞ւ մազերդ թաց են)։ Այն հիմնականում փոփոխվում է +7 — +8 կիսատոն սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչաղասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է +7 — +13 կիսատոն սահմաննե-

բում, այսինքն՝ նվազագույն մեծությունը +7 կիսատոն է (Ո՞ւր գնաց), իսկ առավելագույնը՝ +13 (Որքա՞ն դրամ եկավ ձեռքդ)։ Այն հիմնականում փոփոխվում է +9 — +11 կիսատոն սահմաններում։

Հնչադասության նվազագույն հաճախականությունը: *Արևմտահայերենում, որպես կանոն, հնչյադասության նվազագույն հաճախականությունը տեղայնանում է նախավերջին վանկում, սակայն այն կարող է տեղայնանալ նաև նախավերջինին նախորդող վանկում նույնպես և անփոփոխ մնալ մինչև նախավերջին վանկի ավարտը, որից հետո (վերջին վանկում) հաճախականությունը կտրուկ բարձրանում է։*

Առաջին հաղորդավարի նվազագույն հաճախականությունը փոփոխվում է 100—120 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 100 հց է (Ինչո՞ւ մազերդ թաց են), իսկ առավելագույնը՝ 120 (Ի՞նչ է ծրագիրդ)։ Այն հիմնականում ընդունում է 100 հց արժեքը։

Երկրորդ հաղորդավարի հնչյադասության նվազագույն հաճախականությունը փոփոխվում է 120—170 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 120 հց է (Ո՞վ բանգած է), իսկ առավելագույնը՝ 170 (Ի՞նչ է ծրագիրդ)։ Այն հիմնականում ընդունում է 150 հց արժեքը։

Երրորդ հաղորդավարի հնչյադասության նվազագույն հաճախականությունը փոփոխվում է 110—150 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 110 հց է (Որքա՞ն դրամ եկավ ձեռքդ), իսկ առավելագույնը՝ 150 (Ո՞ւր գնաց)։ Այն հիմնականում ընդունում է 120 հց արժեքը։

Հնչադասության առավելագույն ուժգնությունը: *Առաջին հաղորդավարի հնչյադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 33—38 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 33 դբ է (Ինչպիսի՞ տղա կփնտրես), իսկ առավելագույնը՝ 38 (Որքա՞ն դրամ եկավ ձեռքդ)։ Այն հիմնականում փոփոխվում է 34—36 դբ սահմաններում։*

Երկրորդ հաղորդավարի հնչյադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 29—38 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 29 դբ է (Ո՞ւր գնաց), իսկ առավելագույնը՝ 38 (Ո՞վ է սա մարդը)։ Այն հիմնականում փոփոխվում է 32—35 դբ սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչյադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 31—39 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 31 դբ է (Ի՞նչ է ծրագիրդ), իսկ առավելագույնը՝ 39 (Ո՞ւր գնաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 32—34 դբ սահմաններում։

Հնչադասության ուժգնության ծավալը: *Առաջին հաղորդավարի հնչյադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 1—8 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 1 դբ է (Ի՞նչ պատահեցավ ինձի), իսկ առավելագույնը՝ 8 (Ո՞վ տարավ)։ Այն հիմնականում փոփոխվում է 3—6 դբ սահմաններում։*

Երկրորդ հաղորդավարի հնչյադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 1—12 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 1 դբ է (Ո՞վ տարավ), իսկ առավելագույնը՝ 12 (Ե՞րբ կրնամ նկարս առնել)։ Այն հիմնականում փոփոխվում է 4—7 դբ սահմաններում։

Երրորդ հաղորդավարի հնչյադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 4—10 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 4 դբ է (Ինչո՞ւ կխնդաս), իսկ առավելագույնը՝ 10 (Ինչո՞ւ մազերդ թաց են)։ Այն հիմնականում փոփոխվում է 5—7 դբ սահմաններում։ Այսպիսով՝

1. Արևմտահայերենում **ինչու-ով** հարցման հիմնական տոնի շարժման ուղղությունը գլխավորապես բարձրացող-իջնող-բարձրացող է։ Այն հազվադեպ լինում է նաև իջնող-բարձրացող-իջնող-բարձրացող, բարձրացող-հավասար-բարձրացող և բարձրացող-իջնող։ Բարձրացող-իջնող տոնի շարժումը բնորոշ է արևելահայերենին, սակայն զարմանալիորեն այն առկա է նաև արևմտահայերենում։ **Ինչու-ով** հարցման տոնը հաճախ սրող վանկե-

բում շարժվում է հավասար և զգալի տարբերակվածություն առաջացնում հիմնական տոնի շարժման ուղղության մեջ։

2. Ինչու-որ հարցումն ունի երկու միջուկ կամ գլխավորաշեշտ վանկ. առաջինը ընկնում է հարցական դերանվան վրա, իսկ երկրորդը՝ վերջին վանկի։ Այս իսկ պատճառով, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում վերջին վանկի տոնը մեծ մասամբ բարձրացող է։

3. Հնչադասության հաճախականության ձայնածավալը ցածր ձայնասահման ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է, միջինը՝ 15—16 կիսատոնի սահմաններում, իսկ բարձր ձայնասահման ունեցողների դեպքում՝ 11—13։

4. Միջուկի հաճախականության աճման ձայնածավալը փոփոխվում է, միջինը՝ 6—8 կիսատոն։

5. Ինչու-որ հարցման հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը հաղորդավարի ձայնի հաճախականության ստորին աստիճանին չի հասնում՝ նվազագույնը նրանից տարբերվում է 20 հց-ով։ Այն ցածր ձայնասահման ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 90—120 հց սահմաններում, իսկ բարձր ձայնասահման ունեցողների դեպքում՝ 140—200։

6. Եռամիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է, միջինը՝ 7—10 կիսատոնի սահմաններում։

7. Հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը աճում է, միջինը՝ 7—9 կիսատոն։

8. Հնչադասության նվազագույն հաճախականությունը ընդունում է միջինը՝ 140 հց արժեքը և տեղայնանում է վերջին վանկում։

9. Հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է, միջինը՝ 32—35 դբ սահմաններում։

10. Հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է, միջինը՝ 4—7 դբ սահմաններում։

ИНТОНАЦИЯ ВОПРОСА *ԻՆՉՈՒ-ՈՐ* В ЗАПАДНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. В. ГУКАСЯН

Резюме

На основе изучения вопросов *ինչու-որ* западноармянского варианта современного армянского литературного языка экспериментальным методом были определены акустические характеристики этих фраз: такие, как частотный диапазон фразы, ядра, диапазон интенсивности всей фразы, длительность всей фразы и т. д. Основные выводы сводятся к следующим пунктам: движение частоты основного тона в основном восходяще-нисходяще-восходящее, но изредка встречается также восходяще-нисходяще-восходящее движение тона; в каждой фразе выделяются два слога-ядра, которые характеризуются резким повышением тона и находятся в местоименном слове и в последнем слоге; акустически ядро выделяется изменением частоты основного тона и интенсивности по сравнению с предъядерными и заядерными слогами; в ядерном слоге тон повышается в среднем на 6—8 полутонов; движение тона ядра восходящее, но гораздо чаще бывает восходяще-нисходящим-восходящим; частотный диапазон фразы у дикторов, имеющих низкий голос, изменяется в среднем в пределах 15—16 полутонов, а у дикторов, имеющих высокий голос—11—13; частотный диапазон последнего слога фразы меняется в пределах 7—9 полутонов.